



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Skyline Street

61

U-23



61
4-30

20 JUL 2010 1 MAR 2010

1 MAR 2010


ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա.Գ. ՊԱՏՔԱՐՔԻՐԱԿԻ

ՏԵՂԵԿԱԳՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Եկատ Գուլի Հայոց Հիմնականի


1906 ՏԱՐԻԱՅ



Խորհ. մ. և Հ. ԱԼԵՎ. ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿՈՍՏԱՆԱՆՈՒՄ

1907



Ա.Փ.Աջգ. ԲԻՏԱԿԱՆԱԳՈՅ

Ի ԵԿՏԻ ԳՈՒՀԵ

ԳԵՏԱԿԱՅԱՐԿ

0 1 5 10 20 30 40 50 Ամիս
Ամսիքան 1.60

ԳԱՅՆԻ ՄԹԵՐԱՆ

ԲԻՒԱՆԴԱՆՈՑ ԱՐԱՆ

1

4

1

1

1

४८६

7

ԱՊԱԿԵՂԻՆՍՑ ԳՈՐԾԱՐԱՆ

סִינָה


— 11 —

Ա.Փ.Աջգ. հութաշխան

የ ተቀስ ዓበነዬ

ՀԵՐՔՆԱՅԱՐԿ

0 5 10 20 30 40 50 Ա. Թ. Բ.
Խառնված 1.600




Ս.Փ.Աջգ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ի ԵԵՏԻ ԳՈՒԼԵ

Ա. ՅԱՐԿ

0 5 10 20 30 40 50 մ.թր.
Առավելագույն 500



Տամակումար Տարածութիւն 1071.17 մ.ք.

361
Q-23w

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա.ԶԴ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

370
2369-ՏԵ **ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ**ԵԿՄԻ ԳՈՎԼԵԻ Հայոց Հիւանդանցի****Ա. ՓՐԿԻՉ****1906 ՏԱՐԻ ՈՅ****Տպագր. Վ. և Հ. ՏԻՐ-ՆԵՐՈՒԽՆԱՆ****ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒՆԻՒՆ****1907**

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

ԵԵՏԻ ԳՈՒԼԵՒ ՀԱՅՈՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

1906 Յունուար 1-ի և 1907 Յունուար 1-

Ամենապահիւ Մրազան Պատրիարք Հայր,
Նախագահ Ազգ. Կեդրոնական Վարչութեան Քաղաքական
Պատկառելի Ժողովոյ.

Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնս սրատիւ ունի ներկայիւս
Բարձր Սրբազնութեանդ և Պատկ. Ժողովոյդ մատուցանել առ ինքն վստահուած աշ-
գային սոյն մեծ հաստատութեան գործառնութիւնց 1906 տարւոյ տեղեկագիրն և կը
խնդրէ ջերմապէս որ բաւ համարելով այլեւ երկար տարիներէ ի վեր շարունակարար
վարած պաշտօնն բարեհաճութիւնն ունենաք ազատ կացնել զինքն, աւելի թարմ ոյժերու-
յանձնելով Հիւանդանոցիւ և իւր յարակից մասերու հոգն ու խնամքն :

Այս առթիւ Հոգաբարձութիւնս կուգայ երախտագէտ սրատիւ յայտարարելու թէ՝
սոյն վերջին տարւոյն մէջ Հիւանդանոցս ըստ սովորութեան մեր սիրեցեալ և Օգոստավոսո-
վեհապետին Սուլթան Ապտիւլ Համիտ Խան Բ. առատագութ Կայսեր և բարեինամ կա-
ռավարութեան չնորհներն ու հզօր պաշտպանութիւնն վայելեց և Հայ ազգն համօրէն բա-
րերազդութիւնն ունեցաւ վերջերս Զերդ Բարձր Սրբազնութեան անխոնջ ջանիւք ստա-
նալու նաեւ Նորին Կայսերական Վեհափառութեան բաւեհաճ հրովարտակն որով կ'ար-
տօնուէր շինութիւնն նոր Որբանոցին, որոյ կառուցմամբ աղդին տարաբաղդ մանկալին
պիտի աղատի արդի Որբանոցի խարխուլ շինքին մէջ պատսպարուելէ. ուստի ի զիմաց
հանուր աղդիս Հոգաբարձութիւնս կը մաղթէ ի Տեառնէ որ բարձրեալն Աստուած երկար
ժամի ըլլայ շարունակ վայելելու նորա Օգոստավառ. Գահակալին անսպառ չնորհներն :

Հոգաբարձութիւնս իւր սոյն նորիրական պարտականութիւնն կատարելէ յետոյ
չմոռնար նաև յայտնելու թէ երախտապարտ կը գտնուի նաև Բարձր Սրբազնութեանդ

և Պատկ. Ժողովոյդ որ ամէն պարագայի մէջ չզլացաք երբէք Զեր աջակցութիւնն գիւրացուցիք իւր գործառնութիւններն . ուստի Ազգային Հիւանդանոցիս բարգաւաճ կեր պիւ յարատեւութիւնն Օսմ. Կայս. Կառավարութեան և նորա Օգոստաիառ Վեհապետ Բարձր շնորհաց և միանգամայն Բարձր Սրբազնութեանդ և Պատկ. Ժողովոյդ հոգածութեան և համօրէն ազգիս ձեռնոտուութեան կարօտ ըլլալուն յուսալի է որ յառաջիկայի և ու Հաստատութիւնն պիտի վայելէ զանոնք, այս առթիւ Հոգաբարձութիւնս կը ինսգր թախանձանօք որ Բարձր Սրբազնութիւնդ բարեհաճութիւնն ունենայ պարտ ու պատշաճ տնօրիննել որպէս զի Որբանոցի շինութեան անմիջապէս ձևոնարկուի :

ԿՏԱԿՆԵՐ

Հոգաբարձութիւնս բարեխաղդ է յայտարարելու թէ՝ կտակաց ինդիրն այժմէու թիւն կ'առնու և մերայնոց մէջ օր ըստ օրէ կարեւորութիւն ստանալով, ազգային Հաստատութիւնք հետղհետէ կ'օգտուին ինչպէս որ Հիւանդանոցս ներկայ շրջանին մէջ ունեցաւ դարձեալ իւր բաժինն .

1. Բարեկիշատակ Պաղտիկ էֆէնտի Սագաեան ի կենդանութեանն կատկած ըլլալով որ իւր մահուընէ վերջ թողած ժառանգութեան ¹ բաժինն Ա.զգ. Հիւանդանոցին և Ակիւտար Ս. Կարապետ Եկեղեցւոյ մնայ, վերջերս վախճանած ըլլալով ըստ տրամադրութեան կտակի Բարձր Սրբազնութեանդ հսկողութեան տակ կտարուելով բաշխում Հիւանդանոցին բաժին ինկած է 1520 Օսմ. Միացեալ Քօնսօլիտէ և 2 հատ Քրէտի Ֆօնսիէ էմիքսիէն 338,193 և 338,194 թիւ, որոց փոխարժէքն հաշուուած է 1598 Օսմ. ուկի:

2. Բարիզաբնակ ազգայիններէն վաերմ. Տիկին Երանուհի Թագւոր Բայցա Յակոբեան՝ դուստր հանգուցեալ Պետրոս ամիրա Խօրասանձեանի և քոյլ բարիջիշատակ Տօքթ. Միքայէլ էֆ. Խօրասանձեանի, ի յիշատակ իւր ողբացեալ դստեր բարեհաճութիւնն ունեցաւ 12000 Օսմ. ուկոյ գումար մը նուիրել ալրփ միւլի կալուած մը առնուելով Հիւանդանոցիս վագֆ ըլլալու համար. ուրախ եմք յայտարարելու թէ կալուածի գնման գործողութիւնն կատարուած է ձեռամբ կալուածոց Հոգաբարձութեան Գանձապես Ազն. Խաչիկ էֆ. Խօրասանձեանի և Հիւանդանոցիս վագֆ ըլլալու գործողութեան ալ ձեռնարկուած ըլլալով մօտ օրէն կը լրանայ: Սոյն կալուածին եկամուտն կտակարար Տիկնոջ մահուընէ յետոյ Հիւանդանոցիս յիմարանոցի բարւոքման և պիտոյից պիտի գործածուի որու փոխարէն Հոգաբարձութիւնս պարտաւոր պիտի ըլլայ տարին անգամ մը Ա. Առաքելոց Պողոսի և Պետրոսի տօնին, Հաստատութեանս Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ հոգեհանգ գըստեան պաշտօն և պատարագ մատուցանել տալ ի հանգիստ հոգւոյ իւր և համայն ննջեցելոց Յակոբեան գերդաստանի և հանգուցեալ ծնողաց կտակարար աղնիւ Տիկնոջ և յարեւշատութիւն կենդանեաց: Հոգաբարձութիւնս այս առթիւ կը փութայ յանուան ընդհանուր պատսպարելոց իւր ջերմագին շնորհակալիքն յայտնել առ բարեսէր կտակարարն և մաղթել որ երկար կենոք արժանի ըլլայ ուրիշ բարենպատակ կտակինել ընելու:

Շնորհակալութիւն նաև առ Աղն . Խաչիկ էֆ . Խօրասահնձեան որ ույ գործողութեան ի գլուխ ելնելուն ոռիկ և սովոր ջանադիր դանուեցաւ :

Աւելորդ Համարիր Հոգաբարձութիւնս աստ իշտառակելու թէ՝ Դարակիօղեան ժառանգորդաց հետ համախորհուրդ որոշուած է որ ամէն տարի Յունուար 11-ի յաջորդող կիւրակէին (տարեդարձ մահուան բարելիշտառակ Տիգրան էֆ. Գարակիօղեանի) հոգեհանգստեան պաշտօն և պատարագ մատուցուի Հաստատութեանս Ա. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ

ի հանգիստ հոգւոյ բարեյլչատակ համգուցելոյն և բոլոր ննջեցելոց Գարակէօղեան գերդաստանի և յարեւշատութիւն կենդանեաց, որուն առաջին պատարագն Զեր Ամենապատուութիւնն մատուցած բարեհաճեցաւ այս տարի . կը յուսամք թէ մօտաւոր ժամանակի մէջ ողբացելոյն յիշատակին կառուցանելի Որբանոցի շինութիւնն ի գլուխ ելնելով, նորա փափաքն կ'իրականանայ :

Նոյնագէս հետեւեալ երկու նուիրատուութիւններն ալ որք ժամանակաւ եղած են մէկ մէկ նպատակաւ ցարդ գործադրուած չըլլալուն կտակաց հաշւոյն անցնել հարկ դատուեցաւ :

1. Տիկին էլլիզ Շ. Նազարյանի իշխատակ իւր համգուցեալ ամուսոյն 1903 տարւոյ մէջ 150 Օսմ. ոսկւոյ դռմար մը նուիրած է, յիմարանոցի կանանց բաժնին մէջ բարիոնէ լիցիկներու չինութեան համար:

2. Աղն. Տեղաբք Եղբարք Սրբութանեան իրենց բարեյիշատակ մօր վերջին փա-
փաքանոց համաձայն 1895 տարւոյ մէջ 100 հարիւր 0սմ. ոսկւոյ գումար մը նուիրած են
Հիւանդանոցի մէջ մատենադարանի մը շինութեան համար :

Հոգաբարձութիւնս նկատելով որ արդի խճողեալ վիճակին մէջ շինուելիք խցիկ-ներն մնայուն հանգամանք մը չպիտի կրնան ունենալ , յարմար առիթի մը թողած է նորա գործադրութիւնն որպէս զի տեւական ըլլալով գոհացում արուի ազնուուհի նուիրատուին փափաքին , իսկ սկզբնաւորութիւն եղած է մատենադարանի մը շինութեան ապագային թողլով նորա ամբողջացումն :

ԵՒՆՈՒԹԻՒՆՔ

Մեր նախորդ տեղեկագրին մէջ շինութեանց մասին ինչ ինչ տեղեկութիւններ հաղորդուած էր, այժմ որ շինութիւնք լրացած են աւելորդ չեմք համարիր նոցա մասնամասն պատմութիւնն զետեղել տեղեկագրոյս մէջ։ Ծանօթ է արդէն Բարձր Սրբադնութեանդ թէ՝ 1888ին Հաստատութեանս առաջին վերաշնութեան ամբողջ յատակագիծն չէր կրցած իրագործուիլ, նոյն յատակագծով շինութիւնն հարկ դատուած Տնօրէնութեան սենեկի, Հիւրանոցի, և Հիւանդարանի ամբողջական մաս կազմող երրորդ թեւի, Եկեղեցւոյ և Դիւղարանի շինութիւնք յետաձգուած էին. որոցմէ Տնօրէնութեան և Հիւրանոցի յարկարագինն բարեյիշատակ Միքայէլ էֆ. Յակոբեանի նախաձեռնութեամբ հանդանակեալ գումարով կառուցուած էր որոնց հաջիւն Միքայէլ էֆ. Ներկայացուցած էր ի Պատրիարքարան զոր Բարձր Սրբադնութիւնդ Հոգաբարձութեանս հաղորդած ըլլալով առմարտակն գործողութիւնք ըստ այնմ կատարուած են որոն մասնաւոր ցուցակն կ'երեւի տեղեկագրիս մէջ։ Սոյն հաշուէն 500 Օսմ. ոսկեոյ չափ գումար մը կը մնար արշամադրելի զոր հանդուցելոյն ժառանգորդք Բարձր Սրբադնութեանդ միջոցաւ Հոգաբարձութեանս յանձնած են ինչպէս կ'երեւի իւր մասնաւոր հաշուեցոյցին մէջ։ Սոյն գումարին 325 Օսմ. ոսկին բարեյիշատակ Տօքթ. Միքայէլ էֆ. Խօրասանձեանի կողմանէ գեղարամնի շինութեան համար եղած նորիատութիւնն էր որ միայն սոյն շինութիւնն կրնար ապահովել, իսկ եկեղեցւոյ և Գ. թեւի վերաշնութիւնն բացը կը մնար որոց պակասն խիստ զգալի ըլլալուն և շինութեան ծախուց համար ո՛ և է միջոց չունենալուն Հոգաբարձութիւնս շուարած միշտ դիմումներ կ'ընէր բարեսէրներու առատաձեռնութեան ։ Այս պարագային էր որ երեք պատուակն անձնաւորութիւններ իւրաքանչիւրն հաղարական ոսկեոյ նորիատութիւն մը ընելու յանձնառու ըլլալնին ինքնարերար յայտնեցին որով Հոգաբարձութիւնս սկսաւ զանազան յատակագծեր պատրաստել տալ որոց և ոչ

մէկուն համար բաւական կ'երեւէր արամազդրելի գումարն : Տեղի ունեցած բացատրութեանց և դիմումներուն վրայ յիշեալ բարեսէր անձնաւորութիւնք թէեւ 500 ական ոսկոյ յաւելում մը ըրին և նոր յատակագծերու պատրաստութեան ձեռնարկուեցաւ , սակայն արամազդրեալ գումարն վերստին անբաւական գտնուեցաւ , նա մանաւանդ Հիւանդանոցի պէտքերն օր ըստ օրէ յարածուն ընթացք մը առնելուն տեղույ անձկութիւնն ալ խնդրոյ առարկայ եղած էր որով փորձ մը եղաւ Հիւանդանոցի յարակից գետինն ծախու առնելու որմէ ալ վերջապէս յուսահատ և ներկայ գետնին վրայ կասուցանելի չէնքին համար ալ արամազդրելի գումարն բաւական չըլլալուն նորոգ դիմումներ եղան բարերարներուն որպէս զի 1000 ական ոսկոյ գումար մ'եւս աւելցնեն . ուրախ եմք յայտարարելու թէ՝ Հոգաբարձութեանս սոյն առաջարին սիրայօժար ընդունելութեան արժանացաւ . սակայն պատրաստուած յատակագծերն որ մայրաքաղաքիս մէջ գտնուող հին և նոր , հայ և օտարազգի ճարտարապետաց կողմանէ պատրաստուած էին գոհացուցիչ և արդի պիտոյից համապատասխան չգտնուելուն յանձնախումբ մը կազմուեցաւ որոյ անդամ նշանակուեցան Հոգաբարձութեանս անդամներէն Տեարք՝ Պատրիկ Կիւլպէնկեան , Յարութիւն Ալանեան և Տօքթ . Նազարեան , ճարտարագէտներէն Վուեմ . Տեարք՝ Գէորգ Ալանեան և Գաբրիէլ Սէրվիչէն , բժիշկներէն Տեարք՝ Տօքթ . Ղազարուեան , Տօքթ . Շէրպէթեան և Տօքթ . Զարդարեան որոնք աշակցութեամբ ճարտարապետ Տիար Յակոբ Ունձեանի քանից համախմբելով ճարտարագիտական , առողջապահական և ճարտարապետական տեսակէտներով տեղւոյն ընդունակութեան յարմար վերջնական յատակագիծ մը և յանձնառութեան տետրակ (cahier de charge) մը պատրաստեցին որուն միծ հեղինակութիւնն ու աշխատութիւնն վաեմ . Գէորգ էֆ . Ալանեանի կը պարախմք :

Սոյն յանձնախմբին մանրակրկիտ քննութեամբ պատրաստած յատակագիծն Հոգաբարձութեանս միջոցաւ ներկայացաւելով Պատկ . Վարչութեանդ առանց դիտողութեան ընդունելութեան արժանացաւ որոյ շինութիւնն ալ 9000 սոկոյ գումարի մը կը կարօտէր վերջին ծայր խնայողութեամբ զոր վերջնականապէս նուիրելու յօժարամիտ գըտնուեցան աղնիւ բարերարք :

Ահաւասիկ Ս. Հայր 1000 ական ոսկոյ գումարով ճամբայ ելած և եռապատիկ գումարի մը յանդած շինութիւնք որչափ Հոգաբարձութեանս կողմանէ եղած թախսնագին դիմումներով նոյնչափ ալ նույրատուաց կողմանէ ցոյց տրուած վեհանձնութեամբ ի գլուխ ելան :

Սոյն նուիրատուք են լինչպէս ծանօթ է Բարձր Արբազնութեանդ վսեմ. Տեարք Յովհաննէս Յակոբեան, Մաթուս և Արիկ Ունճեան և Սեղովբէ և Սարգիս Կիւլպէնկեան Որդիք:

Եւ որովհետեւ ծախուց գումարն օր ըստ օրէ կը կրկնապատկուէր ու կ'եռապատկուէր, բարերարաց և Հոգաբարձութեանս մէջ համաձայնութիւն գոյացաւ որպէս զի չի-նութեան գործն կապալաւու ճարտարապեսաց յանձնուի և Հոգաբարձութիւնս ալ իւր կողմանէ հսկող ճարտարապետ մը կարգէ որովհ երկրուտէք զերծ մնան աւելորդ ծախուց ենթարկուելէ։ Այս գրութեամբ Յակոբեան մասն ստանձնեց ճարտարապետ Լեւոն էֆ. Կիւրեղեան և Ունճեանց ու Կիւրապէնկեանց մասերն ալ ճարտարապետ Գրիգոր էֆ. Մէ. Ալտուեան, ընդ հսկողութեամբ ճարտարապետ Յակոբ էֆ. Ունճեանի։

Քանի որ խնդիրն 1000 ական ուկիէն 3000 ական ոսկեոյ յանգեցաւ, Հոգաբարձութիւնս երբէք համարձակութիւն չպիտի ունենալը թէ՝ կահաւորման և թէ՛ չնախատեսուած ծախուց ապահովութեան խնդիր յարուզանելու և այս պատճառաւ էր որ Հոգա-

բարձութիւնս պարտաւոր զգաց զինքն շինութեան գործն գլուխ հանելու որու աւարտման մօտ ականներու և պատերու շինութեան, հողերու յարդարման եւայլնի համար պէտք եղած ծախքերն ալ դիր զմեղս ի վերայ մեղաց դրութեամբ բարերարներու վրայ բեռնաւորելու ո՛չ համարձակութիւն և ո՛չ ալ կամք ունեցաւ. հետեւաբար սոյն ծախքերն Հիւանդանոցին պիտտէին վրայ ծանրացնելու հարկին մէջ գտնուելով շինութիւնն աւարտելու վիճակին հասուց:

Եւ որովհետեւ Ազն. Յովկաննէս էփ. Յակոբեան ամսիջական կերպով շնորթեանց սկզբնաւորութեան և կարելի եղածին չափ սուղ միջոցի մէջ գլուխ հանելու կամքն ու փափաքն ունեցաւ և նախաձեռնարկ ըլլալով ինչն ամենէն առաջ շնորթեան ձեռնարկեց և ամենէն առաջ աւարտեց, կահաւորման գործն յոյժ զգալի ըլլալուն ինչն սիրայօժար ստանձնեց չէնքին յարմար եղանակաւ և ամենավերջին կատարելագործեալ կապամաճնեռու կահաւորել զայն որուն բացումն ամէնէն առաջ տեղի ունեցաւ:

Նորին Ազնուութիւնն իւր սոյն բարեգործութիւնովն ընդհանուր աղքիս կրկնակի չնորհակալութեան և երախտագիտութեան արժանացած է :

Շէնքին ճակատն հետեւեալ արձանագրութիւնն զետեղուեցաւ. «Զայս բաժին «յարկիս հիւանդաց յաւել շինել լիւրոց արդեանց Այրն Բարեսէր և Բարեգործ Յովհաննէս Յանի առաջնորդ էաւ առաջնորդ մերայինութեան միւս մասանց. 1906 :»

«Յակոբեան, որ սատրեալն էր արդէս զարաւութեան մէջ
իսկ կահաւորման համար հետեւեալ յիշատակարանն զետեղուեցաւ չէնքին մէջ
նուիրատու բարերարին պատկերովն. «Հիմնարկուն յարկիս և Բարերարողն Հիւանդանոցին
«Յովհաննէս Յակոբեան յաւել յարդարել գայն, կահիւք և կարասեօք և հաստաել ի նմին
«Կայ Պատուական. 1906:»

Գալով Ունձեան յարկաբաժնին Վսեմ. Մաթուս էքիչստի Ունձեան հիմարիքէն
առաջ իւր ողբացեալ հարազատն կորսնցնելու դժբաղդութիւնն ունենալով հանդերձ, իւր
և հանդուցելոյն փափաքն իրագործելով շնութիւնն աւարտեց շնորհապարտ թողլով
ոչուահուածութիւնն և աղգն համօրէն :

ՊՆՊԱՐԱՋՈՒԹՅՈՒՆ և Ա.Վ.Դ.՝
Սոյն շենքին ճակատն ալ հետեւեալ արձանագրութիւնն զետեղուեցաւ . «Զայս
«բաժին յարկիս հիւանդաց կառուցին և նույիրեցին ի յիշասակ ծնողաց իւրեանց կարս-
«պետի և Թագուհուոյ, որդիք նոցին Բալեսէր և Բարեգործ Մաթուս և Սքիկ Ռւնձեան,
«ու ու մ ու ու հան ի ու ու հ գինի մահուան եղբօրն . 1906 :»

«զոր և Մաթուս համ ի գլուխ՝ դրւ նոյնպէս կիւլպէնկեան հարազատաց արժանաւոր որդիք իրենց ստանձնած գործն պլուխ հանելով յաւերժացուցին յիշատակն իրենց հանգուցեալ ծնողաց լի ու լի կատարելով յաւերժացուցին որոց եւս կը փութամք մեր և համօրէն ազգիս երախտագիտութիւնն ստանիւ»:

Սոյն չէսքին ճակատն ալ հետեւեալ արձանագրութիւնն զետեղուեցաւ . «Զայրացին յարկիս հիւանդաց կառուցին որդիք երախտաւոր հարազատաց Սերովիկի և «բաժին յարկիս հիւանդաց կառուցին որդիք երախտաւոր հարազատաց Սերովիկի և «Սարգսի կիւլպէնկեանց , և նուիրեցին ի միշատակ ննջեցելոց ազգատոհմին , որք ընդ հովանական եւ կուկուս կան հանգուցեալ . 1906 :»

Հաստատութեանս Գ. թեւի շինութեան սկզբնաւորութիւնն պատճառ եղաւ Ազնի Թահապրունեան հարազատաց Ագաթան և Կարապետ էֆէնախներու իրենց վաղամենուի եղբօր Դիոդինէս էֆէնափի լիւատակին Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ի հիմանէ կառուցման վա վաքն յայտնելու, պատրաստեալ յատակալիքին Հոգաբարձութեան կողմանէ ընդունուել վերջ մատուցուեցաւ Կրօնական Պատկառելի Ժողովոյ նկատառման որուն վաւերացումէց յիշող կապալառու ճարտարապետ Մելիքառեան Դրիգոր էֆէնափի կողմանէ կառուցուե

ցաւ ընդ հսկողութեամբ ճարտարապետ Եղիազար էֆ. Աւետիսեանի, որոյ մայր գրան վրայ հետեւեալ արձանագրութիւնն զետեղուեցաւ.

ՏԱՅԱՐԸ Ս. ՓՐԿՉԻՆ

**Փայտակերտ կառուցաւ զառաջինն յամին 1833 ի հոգելոյս
Պէզնեան Յարութիւն Ս.միրայլ.**

«Զարդիս վերստին կառուցաւ ի հիմանց տունս սրբութեան ի տեղուզա գիտւ-
«թեան՝ արդեամբ և ծախիւք բարեպաշտօն Տեարց Ագաթանայ և Կարապետի հարազա-
«տաց Թաճթապրունեան ի լիշտավակ և ի հանգիստ հոգւոյ եղբօր իւրեանց Դիոգինեայ վա-
«ղաժամ վախճանէլոյ յամին 1898, և տեառնագրեցաւ յանուն Ամենասուրբ Փրկչին ի Կա-
«թողիկոսութեան Տ. Տ. Մկրտչի և ի Պատրիարքութեան Տ. Մաղաքիայ։ Յամին
1906 ՌՅՇԵ։»

Եկեղեցւոյս վերաշինող թահթապրունեան եղբարց փափաքանաց համաձայն ամէն տարի Նոր Կիւրակէի օրն հոգեհանգստեան պաշտօն և պատրագ պիտի մատուցուի ի հանգիստ հոգւոյ ննջեցելոց թահթապրունեան գերլաստանի :

Բարեկլիշտառկ Տօքթ. Միքայէլ Էֆէնտի Խօրասաննեանն ի յիշտառկ իւր հանդուցեալ հօր գեղարանի կառուցման համար 1900 թուականին Միքայէլ Էֆէնտի Յակոբեանի յանձնած էր 325 Օսմ. ոսկոյ գումար մը. թեպէտ և Տնօրինութեան յարկաբաժնին մէջ սենեակ մը յատկացուած էր իր գեղարան ծառայելու և որուն վրայ ալ արձանագրութիւն մը զետեղուած, սակայն ո՛չ այդ սենեակն դեղարանի յարմարութիւն ունէր և ո՛չ ալ նուիրատուին կամքն նուիրագործուած կ'ըլլար, զի սոյն յարկաբաժնի ծախքն ուրիշ աղբիւրներէ հայթայթուած ըլլալով հանգուցելոյն նուիրած գումարն պատրաստ կը մնար. ուստի հանգուցելոյն կամքն իրագործուելու համար իւր Վսեմ. այրին և զաւակսնքն փափաք յայտնեցին վերոյիշեալ գումարն 525 Օսմ. ոսկոյ վերածել 200 Օսմ. ոսկոյ նոր նուիրատուութեամբ մը և սոյն գումարով ի հիմանէ կառուցանել դեղարանն: Ազնիւ նուիրատուաց սոյն փափաքն եւս իրագործուեցաւ կառուցմամբ գեղարանին ի ձեռն ճարտարապետ Լեւոն էֆ. Կիւրեղեանի: Ուստի օրնենելով յիշատակն հանգուցելոյն, Հոդաբարձութիւնս կը փութայ իւր խորին չնորհակալութիւնն յայտնել Վսեմ. Տիկին Մարիամ Մ. Խօրասաննեանի և զաւակացն որք հաստատութիւնս օժտեցին նորաչէն դեղարանով, որոյ ձականն հետեւեալ արձանագրութիւնն գետեղուեցաւ.

Զոր և յիշատակ իւր ծնողին

**Բազմադիմ Ս.միրային Պետրոսի Խօրասաննեան
Սահմանեաց կառուցանել Բժշկապետն Վասմ**

Միբայել էջմիածին Խօստանեան .

ԶԴԵԼԱՐՁԱՆ ՀԻւանդանոցին

Եկեղին Ժառանգույթն ըստենախանձ

Այսին եւ Գուստը իւ Ռասերք

Յամին 1906 , Աջօտ :

առ ու ակնելիապին սէջ

Խաչպէս որ նախորդ տարւոյ տեղեկազրին մէջ յայտնած էինք Աղն. Տիկին Թագուհի Յ. Գարամանեան իւր ողբացեալ ամուսնոյն Յակոբ Էֆէնտիի կամքն յարգելով Հիւանդանոցիս ամինակարեւոր մի պական լրացուցած է հականեխիչ մնծ ջեռոցի մեջ

Այսի մը նուիրատուոթեամբ : Սոյն մեքենայն իւր կաղմածներով և գետեղման համար ալ եղած 50 Օսմ . ուկոյ նուէրով արժած է 634 Օսմ . ոսկի . իսկ տեղւոյն շինութեան և զանազան ծախուց համար 304 $\frac{1}{2}$ Օսմ . ոսկի Հիւանդանոցիս մնանուկէն ծախսուելով այս ամենամեծ պակասն ալ լրացաւ և փորձով տեսնուեցաւ թէ՝ սոյն մեքենայն Հաստատութեան համար ամենասահմանափակեցած պէտք մ'է , զի ասկից առաջ արձակեալ և կամ վախճանանս համար ամենասահմանափակեցած պէտք մ'է , զի ասկից առաջ արձակեալ և կամ վախճանեալ հիւանդի մը ապականեալ անկորոնյն մէջ նոր հիւանդներ կը դրուէին որ խզի դէմ էր , այժմ չնորհիւ սոյն հականեսիչ մեքենային թէ՝ անկորիններն և թէ՝ հանդերձեդէմ էր , զի մնան վարակիչ հանդամանքներէ : զէններն հականեսիսուելով զերծ կը մնան վարակիչ հանդամանքներէ :

Ուստի օրհնելով յիշատակն հանգուցելոյն չնորհակալութիւն կը յայնեմք նորա
այրուցն աղջկան և պարագայից որոց փափաքանաց համաձայն տարին անդամ մը Ս. Յա-
կոբայ Մծնայ հայրապետի տօնի հետեւեալ Կիւրակէ օրն հոգեհանգստեան պաշտն և
կորայ Առաք հայրապետի Հաստատութեանս Ս. Փրկչի մատրան մէջ ի հանգիստ հոգ-
ւոր հանգուցելոյն:

Տեղի ունեցած փոփոխութիւնն հետեւելն է.
Կերպուրներու և միսերու դարանն և աղտօս ամաններն լուալու տեղն միեւնոյն
միջավայրի մէջ գտնուելուն անտեղութեանց աեղի կը տրուէր, ասոնք իրարմէ անջատուե-
ցան : Խոհանոցի մասանին մէջ պատոհաններ բացուելով աւելի օդաւէտ և առողջապա-
հիկ վիճակի մէջ դրուեցաւ և աման լուալու համար ալ խոհանոցի միւս կողմն յատ-
կադուեցաւ :

Երրորդ թերի շինութեամբ նորա շուրջն դասուած հոգիուու յարդարաւու և զգալի ընել տուաւ Զերդ Բարձր Սրբազնութեան կողմանէ երկար տարիներէ ի վեր յայտ նուած փափաջն իրագործումը այն է հրապարակի յարդարումն և հիւանդարան ենիւլի սանդուվսին շինութիւնն որն որ այս առթիւ Զեր Բարձր Սրբազնութեան հրամանաւ ի գլուխ համելով ընդարձակ հրապարակ մը ունեցանք որուն համար ալ Հիւանդանոցի մէջ Ամ օօօ Օ Տ ամիսու պումար մը ծախսուեցաւ :

Մամնաւոր չնորհակալութիւն կը պարտիմք Վասու . Ի՞սորդ չէ Յալաւաւու Միայն ամբողջ Հինութեանց յատակագծերն պատրաստեց , այլ և Հինութեանց սկզբնաւու 2

բութենէն մինչեւ աւարտումը, վերին հսկողութիւնն ստանձնելով շինութիւնք վայելուչ կերպիւ ի գլուխ ելան:

ՀԱՇՈՒԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ներկայ տարեշրջանի մէջ եւս տոմարական մի քանի սրբագրութեանց պէտքն զգալի եղաւ :

1 Զանազան աղքայնոց կողմանէ նուիրուած թէ՛ եկեղեցական և թէ՛ հիւանդաշանի վերաբերեալ իրեղէններ որոնք մատակարարութեան հաշոյն իբր հասոյթ կ'անցուէին և իրաւամբ գումար մը կ'արտադրէին Հիւանդանոցիս գոյքերու արժէքին վրայ յաւելում պատճառելով, մատակարարութեան հետ ո՛ և է առնչութիւն չունենալուն մասնաւոր գլուխի մը մէջ ամփոփել ստիպուեցանք:

Սոյն նուիրատուութեանց մէջ կարեւոր տեղ մը կը բանէ կրօն . Ժողովոյ ատենաւ պետ Գեր . Տ . Մեսրովպ Ա . Արքեպիսկոպոս Սուքիասեանի Հիւանդանոցիս եկեղեցւոյն նուիրած Ա . Աստուածածնայ պատկերն և եկեղեցական գգեստն ըստ հետեւեալ ցուցակի :

- Պատկեր Ս. Աստուածածնայ յախճապակի վրայ մինեռվ գծուած :
 - Նուրջառ ոսկեթել հնդիկ կապոյս կերպասէ :
 - Փորուրար ոսկեթել հնդիկ կապոյս կերպասէ :
 - Զոյգ բազպան ոսկեթել հնդիկ կապոյս կերպասէ :
 - Զոյգ արտախուրակ մարգարտահիւս :
 - Վակաս :
 - Թագ Եպիսկոպոսական կարմիր քաւիչի վրայ ասեղնազործեալ եւ մարգարտահիւս :
 - Եմիփորոն ոսկեթել ասեղնազործեալ եւ մարգարտահիւս :
 - Նուրջառ կապոյս լիօնի մետաքսէ :
 - Զոյգ կարմիր բազպան :
 - Հովուական գաւազան (5 կտորէ բաղկացեալ) :
 - Ժամարարի շապիկ մետաքսէալ :
 - Սրբմա զօսի գոյնզզոյն բարէ կոնակներով :
 - Զոյգ հողարափ ասեղնազործեալ :
 - Չեռքի անձեռոց :
 - Խաչի բոնիչ :
 - Փոքր ձեռաց խաչ մինելի մասունքով որ նոր ժինել տրուած նախանշաւոր արձար խաչին մեջ զետեղուած է :

Որոց ամբողջութիւնն 500 Օսմ. ուկրոյ գումար մը գնահատուած է, որ սոյն նոր բայցուած հաշուեզլիխն մէջ անցած է և որուն համար կը փութամք մեր չնորհակալիքն յայտնել Նորին Սրբազնութեան որ իւր սոյն նուիրատուութեամբ Հիւանդանոցիս մէկ կարեւոր պէտքն լրացուց, որովհետեւ եպիսկոպոսակիան զգեստի հայթայթման համար Հոգաբարձութիւնս սահիպեալ էր ուրիշ եկեղեցիներ դիմել և փոխադրութեան ծախսք վճարել. ուստի Հոգաբարձութիւնս որոշած է Նորին Սրբազնութեան կողմանէ յարմար դատուած օր մը հոգեհանգստեան պաշտօն և պատարագ մատուցանել տալ ի յիշատակ իւր ննջեցելոց և յետ մահուան իւրոյ իւր հոգւոյն համար եւս:

Նոյնպէս Ս. Եկեղեցւոյ վերաբերիալ զարդեղլէններու գնման համար տեղի ունի.

յած հանգանակովթեան 9268 դր. ի գումարն լինչպէս նաև զանազաններէ նույիրեալ զարդեղիններու փոխարժէքն 5422 դր. սոյն հաշուեցվածին մէջ անցած է որոց մանրա- ժամանակը ու բարձրաց առ առ առևտու տեղուեածոին մէջ կը տեսնալի:

Նաեւ բարեսէր անձի մը կողմանէ նույիրեալ զանազան կարտուր ևս. Յօթ դրչ. արժէքով, նմանապէս Պօղոս Յակոբեան անուն ծերունոյն սբառապարութեան փոխարէն առնուած կէս խանութի արժէքն 2500 դրչ. և որ կալուածոց արժէքին վրայ աւելցած է:

Նոյնպէս Արհեստական վտրժարանի խնամակալութենէն առսուած 600 օնս . սովորական գումարն որ արհեստարանաց ճիւղի պիտոյից գործածուելու համար Որբանոցի խնամակալութեան յանձնուած է սոյն հաշուեգլիխն մէջ մուտք և ելք նշանակուած է :

1898 Դեկտեմբեր 31 ին վիճակն է	3,333,235 ½	5,593,566
1898 Մայիս 1-ին վիճակն է	3,333,235 ½	5,593,566

1906 Դեկտեմբեր 31-ին վիճակը է՝ 2,260,330 ½
պառ 93,678 ¼ դր.՝ պահասալի գումարէն զատ 3,400,905 ։ ՊՐ. Փ հասովից առաւելու-

թիւն ցոյց կուտայ որ վերսիշեալ երկու վիճակներու տարրերութենէն բացայսյու կ մրսւի :

Նոյնպէս մասնաւոր ցուցակաւ սոյն տեղեկադրին մէջ զետեղուած է առաջին վերաշնութեան մանրամասն հաշուեցոյցն , քաղելով բարեկշատակ Յակոբեան Միքայէլ էֆէնտիի կողմանէ Ազգային Պատկ . Վարչութեանով մատուցեալ և յետ վաւերացման Հոգաբարձութեանս հաղորդեալ հաշուետումարներէն յորմէ բացայայտ կերպիւ կը տեսնուի թէ Հիւմնդանոցիս առաջին վերաշնութիւնն ո՞չափ նուիրատուութեամբ և ո՞չափ ծախսքով գլուխ եղած է , և բարդելով նոյն գումարին վրայ թէ վերջին շինութեանց գումարն և թէ Հոգաբարձութեանս շրջանին մէջ կառուցուած շէնքերու փոխարժէքն , պատկերացեալ կը տեսնուի Հաստատութեանս վերաշնութեան սկիզբէն մինչեւ հիմա ծախսուած գումարն , որ 40,000 Օսմ . ուկւոյ պատկառելի գումարին կը հասնի :

Տարեցրանիս սկիզբը պատրաստ գտնուած 804 պատսպարեալ և 147 պաշտօնէից թուոյն վրայ բարդելով ասրւոյն մէջ ընդունուած 1757 պատսպարելոց և 87 պաշտօնէից թիւն և զեղչելով բժշկեալ կամ բարւոքեալ մեկնող 1443 հիւմնդաց , 70 պաշտօնէից և 281 ննջեցելոց գումարն 1907ի կը փոփաղբեմբ 1001 որոց 838ը պատսպարեալ և 163ը պաշտօնեայ են :

1906 տարեցրանի գուտ հասութիյց գումարը կը հասնի 1,305,595 դրչ.ի և մատակարարութեան ծախսուց գումարը 1,265,916 ։ դրչ.ի որով մատակարարութեան հաշիւը կը հաւասարակուէ :

Սոյն ծախսուց 393,263 դրչ.ը հիւմնդարանի , 366,303 դրչ.ը յիմարանոցի , 90,545 դրչ.ը ծերանոցի , 375,804 դրչ.ը որբանոցի և 29,997 ։ դրչ.ն ալ ուսանողներու պիտոյից համար ծախսուած է որով հաստատութեանս մէն մի

Հիւմնդի	2221.82	դրչ.
Յիմարի	1267.48	»
Ծերի	1104.20	»
Որբի	1467.98	» եւ
Ուսանողի	2142.69	» ծախսուած կ'ըլլայ :

Մատակարարութեան հաշուեցոյցէն ինչպէս կը տեսնուի թէ հասոյթ և թէ ծախսք գրեթէ հաւասարակուուած են , սակայն արտասովոր շինութեանց ծախսքերն հակառակ Հոգաբարձութեանս ջանից կարելի ըլլալով ո' և է հասոյթով մը գիմասորել , Հիւմնդանոցիս վրայ 243,597 ։ դրչ.ի գումար մը կը ծանրանայ , որոց վրայ եթէ տեխնիկներէն Հոգաբարձութեանս պաշտօնի սկզբնաւորութեան թուականն եղող 1899 էն մինչ 31 Դեկտ . 1906 մատակարարութենէ գոյացեալ 104,567 ։ դրչ. բացն կ'ունենամք 3400 Օսմ . ուկւոյ չափ գումար մը այսինքն 2000 ուկւոյ պարտուց յաւելում մը : Թէպէտ մեր պարտուց գումարը կը հասնի 7500 Օսմ . ուկւոյ սակայն սոյն պարտուց 4000ը մեր նախորդներէն ժառանդում ըլլալով կը թողումք մեր յաջորդներուն : Սա ևս չմոռնամք նշանակելու թէ որոշմամբ Տնտեսական Խորհրդոյ և արտօնութեամբ Ազգ . Վարչութեանդ մեր պաշտօնավարութեան շրջանին մէջ 2000 ուկւոյ անդանձելի պահանջից գումար . մը ջնջած եմք մեր մատակարարութեան հաշուեցոյցէն գոր ժառանդում էինք մեր նախորդներէն : Եթէ միեւնոյն շրջանի մէջ հին և նոր շինութեանց համար ծախսուած շուրջ 4500 ուկւոյ գումարն նկատողութեան առնումք , ջնջուած 2000 ուկւոյ գումարին հետ 6500 ուկւոյ կը յանգի . և եթէ արտաքոյ կարգի հասոյթներ . հայթայթելով միջոցը գտնուէր Հիւմնդանոցն այսօր ո' և է պարտք մը ունեցած չպիտի ըլլար :

Սոյն առարկութեամբ չենք ուղեր ինքզինքնիս արդարացնել , զի պարտքը պարտք է և Հոգաբարձութեանս միակ փափաքն էր առանց պարտքի իւր յաջորդաց փոխնցել Հաստատութեանս հոգն սուանց նկատողութեանս առնելու 40,000 Օսմ . ուկի արժողութեամբ եղած կատակներն . ինչպէս որ բաղդատական ցուցակէն պիտի տեսնուի գոյից և վիճակի տարբերութիւնն 34,000 ուկւոյ կը յանգի . սակայն կարելի չեղաւ հակառակ մեր ջանից որուն միակ պատճառը բաց դուռի ինդիբը եղած է . ո'չ մէկ հիւմնդանոց և ո'չ մէկ հաստատութիւն մերինին նմոն խօղուած է , ամէն կողմանէ պատսպարեալներու անվերջանալի դիմումը և ստիպումը , ծախուց սահմանափակումը անկարելի ըրած են : Յիրաւի Հիւմնդանոցս օժտուեցաւ այսափ շէնքերով սակայն անհամար պատսպարեալներով լեցնելու համար չէ այլ որոշ թուով պատսպարեալներ կանոնաւորապէս պատսպարելու համար :

Եթէ բաղդատակութեան դնենք Պոլսոյ Հայ բնակչութեան արդի թիւը 15 տարի առաջուան թուոյն հետ և նկատողութեան առնումք նոյն ժամանակի պատսպարելոց թիւն ներկայիս թուոյն հետ արդի չէնքերն իի ու լի պիտի բաւէին Հիւմնդանոցս դիմողներու պիտոյից գոյացում տալու . պիտի ըսուի թէ 20 տարի առաջուան Հիւմնդանոցի վիճակը բաղդատելով ներկայիս հետ անհամեմատ կերպիւ բարւոքուած ըլլալուն բնական է որ դիմումներն պիտի աւելնան , վասն զի քառորդ դար առաջ ամէն մարդ հիւմնդանոցն իրը սպանդանոց համարելով , սպասակով դռնէն ներս կը մանէր , մինչդեռ հիմայ բողոքովն հակառակն է և ըստ կարելույն ամէն տեսակ կարելի է գտնել անդ . սակայն Հոգաբարձութիւնս իւր փորձառութեամբն տարբեր համոզում գոյացուցած է . ինչպէս ըսինք բաց դուռ , ձրի հաց և ձրի դարմանի դրութիւն եթէ շարունակուի և վերջ մը չարուի ձրիառար ընդունելուն (բաց ի ծամարիտ կարօտեալներն) ինչ տեսակ Հոգաբարձութիւն ալ ըլլայ և ազգայնոց գթասպառութիւնն որչափ ալ բաղմապատկուի , գալիք հասոյինքներն սպանդական ըլլալով ո'չ միայն պարտքէ աղատի կարելի չպիտի ըլլայ այլ նաեւ հետեւանքն աղետալի պիտի ըլլայ :

Հոգաբարձութիւնս իւր սոյն վերջին տեղեկագրով պարտականութիւնն կը համարի , յայտարարելու թէ բաց դրան և ձրի դարմանման չափ մը դրուելու է . Հաստատութիւնս բովանդակ նշանակութեամբը ըմբռնելու է և պէտք չէ նորա ամէն ձիւղերն մէկ մէկ ապաստարանի վերածել .

Ազգային ամէն անհատ կամ պաշտօնական մարմիններ կեղրունին մէջ Թաղական Խորհուրդներ , սոյնպէս գտաւաներու մէջ թէ ազգային անհատք և թէ առաջնորդ Ս . Հայրեւ : մտքերնուն մէջ արմատացուցած են սա գաղափարը թէ Հիւմնդանոցի մէջ անսպառելի հաց ու պարէն և դարման կը գտնուի և թէ տարեկան մէկ քամի հարիւր դրչ.ի օրացոյց ծախելով իրենց թաղին կամ վիճակին մէջ գանուած անբռնելի հիւմնդան յիմարն ու ապաշը , ձերն ու որով վերջապէս փորձանաւոր կոյսն ու մոլորեալ կրօնաւորը կարելի է պարտկել պատսպարել տալ Հիւմնդանոցի մէջ . ուստի համոզուելու են թէ ո' և է անսպառ աղբիւր ներկայ պարագայից մէջ բաղմապան պէտքերու առջեւ կարելի չէ չսպառիլ :

Հիւմնդանոցի մատակարարութիւնն կրնայ հաւասարակուուիլ և մեր ազգայնոց պէտքերուն գոհացում տալ հետեւեալ կերպիւ :

Այս բարեկեցիկ անձնաւորութիւնը որ իւր սպասուհոյն և սպասաւորին թախանձանաց չկրնալով դիմանալ երբ միջոցներ կը խորհիշեալ դասակարգին պատկանող մէկը տեղաւորել Հիւմնդանոցի մէջ , պարտի քաջ ըմբռնել թէ նորա ամսական կամ

տարեկան թոշակն ապահովագէս վճարելու յանձնառու ըլլալու է . նոյնպէս ո՛ և է թազական խորհուրդ և գաւառական առաջնորդ իւր վրայ բեռ եղող և զինքն զրաղեցնող անկեալ մը կամ ո՛ և է բաղդազուրկ մը երբ կ'ուզէ իր գլխէն հեռացնել պէտք չէ մը տարերել անմիջապէս թէ՝ Ազգ . Հիւանդանոցն պատրաստ է ընդունելու , այլ անոր տարեկան ծախքն ինչ որ է ապահովելէ և երաշխառորելէ յետոյ պարտի դիմում ընել :

Այս դրութեամբ երբ ո՛ և է մէկը բաղդի բերմամբ անկեալ վիճակի մէջ զբանուի Հիւանդանոցի մէջ պաշտօնավարելու պատրուական աղջեցութիւն կամ աղաչանքներ ըլլան պաշտօնական մարմիններու և Հոգաբարձութեան անդամոց , Հոգաբարձու մարմինն նախ կ'ունենայ հաւասարակշռեալ պիտօնէ մը և այս առաւելութեամբ մտքի կատարեալ հանդարտութեամբ միջոց պիտի ունենայ Հիւանդանոցի մէջ ստեղծելու այնպիսի գործեր իւրաքանչիւր պատսպարեալի աշխատութեան կարողութեան համեմատ . որով թէ իրենց ժամերը աւելի հաճելի պիտի ըլլան և թէ՛ ձրի հացի աչք տնկելու աղտոտ գաղափարներն պիտի վերնան . ահաւասիկ այն ատեն է որ Հիւանդանոցն առանց խճողման կարող պիտի ըլլայ գոհացնելու անդ դիմողներուն ամէն պիտքերը և փոխանակ ձրի և կամ 30—40 դրէ նոց պաշտօնեաներ գործածելու օրինաւոր վճարմամբ կանոնաւոր պաշտօնեաներ պիտի ունենայ ի դոհացումն ամէն կարգի աղջայնոց :

Երբ այս դրութիւնն մուտ գտնէ մեր Հաստատութեան մէջ գործոց ընթացքն ինքնին կը կանոնաւորուի և այսպիսի կաւելի կ'ըլլայ աղջին վրայ ծանրացած բեռը թեթեցնելով սոյն հասոյթի աղբիւներն յատկացնել Հաստատութեան ամէն կերպ բարւոքման որուն դեռ շատ պէտք կայ և այս միջոցներով է որ կարելի կ'ըլլայ նաեւ տարուէ . տարի պահեստի գումար մը մէկ կողմ դնել և յատկացնել այսչափ հազարաւոր ոսկիներով կառուցեալ շէնքերու վայելուչ վիճակի մէջ պահպանման վասն զի նոր շէնքերն ալ մաշելու , հինալու ենթակայ են . ինչ բանի կը ծառայէ հազարաւոր ոսկիներ ծախսելով շէնք մը կառուցանել , քանի որ անոնց հիմնական նորոգութիւնն ու պահպանումը անկերելի կ'ըլլայ :

Թեպէտ կը յուսացինք հասոյթի նորանոր աղբիւներ ստեղծել , սակայն ցաւօք կը տեմնենք թէ Հաստատութիւնն մատակարարելու հոգն այնչափ ծանրացած էր որ ունեցած միջոցներով կանոնաւորապէս պահպանելն ալ բաւական գժուարին գործ մը եղած է :

Նախորդ տարւոյ տեղեկագրի մէջ ծանուցեալ նոր ծրագիրներէն բժշկական մասը ներկայ տարեշրջանի մէջ եւս շարունակելու որոշմամբ և միայն աւելի աջալուրջ հսկողութեան խոստումով դոհացանք :

Հիւանդապահներու կազմակերպութեան գալով , Անդղիայէն երեք կարող հիւանդապահուներ բերուեցան չնորհիւ Ազն . Յովհաննէս էֆ . Յակոբեանի որոց մէկ տարեկան ամբողջ թոշակն 220 անդղ . ուկի յանձն առած է հոգալ որք միայն իւր կառուցած յարկաբամնին մէջ պիտի ծառայեն , և որք նոյնութիւն 1 էն պաշտօնի ձեռնարկած են մէկ տարի պայմանամաժաման . սոցա ծառայութեան եղանակն , մաքրութիւնն ու հսկողութիւնն իրաւամբ հիւանալի են , սակայն միւս երկու յարկաբամներու կահաւորումն դժբաղդաբար ժամանակի կարօտ ըլլալուն Հաստատութիւնն չկարողացաւ լիուլի օգտուիլ սոյն կարող հիւանդապահունեաց ծառայութիւնն :

Ինդհանուր պատսպարելոց սնունդի խնդիրն ալ ուշադրութեամբ նկատողութեան առնուելով թեպէտ և ըստ կարելոյն դոհացում արուած է , սակայն բաղձացեալ կէտին չէ հասցուած , կը յուսանք համնիլ ժամանակին : Իսկ լուսացարանն շոգիի դրութեան վերածելու ինդիրն այժմ մէկ կողմ դրուելով , կարելի եղած միջոցներով բարւոքած է :

Հաստատութեանս կտակեալ կալուածոց գործն որ ինչպէս յայտնի է Զերդ Բարձր Սրբազնութեան յանձնաժողովոյ մը ձեռօք կը կառավարուի և հակառակ անդամոց բարեցակամութեան և քրտնաթոր աշխատութեան դեռ կարելի եղած չէ վերջնականապէս կալուածական կնճուս գործերն կարգի դնել . այս առթիւ պարտ անձին կը համարինք մեր չնորհակալիքն յայտնել կալուածոց Պատ . Յանձնաժողովով մրաջան անդամոց և յաջողութիւն ու կարողութիւն կը մաղթեմք :

Ծնորհակալութիւն Տիկնանց Պատ . ինամակալութեան աղնիւ անդամուհեաց որք կանոնաւոր այցելութեամբ իրենց ինամանոց յանձնաւուած հանդերձատան և Որբանոցի գործերն խղճի մաօք կը կարգադրեն :

Ծնորհակալութեան պարտք մ'ունինք առ Վանմ . Սեպուհ Պէտր Մագսոււ և առ Պատ . անդամս Նուագահանդէսի Կարգադրի Մասնախմբի , որ սոյն տարեշրջանիս մէջ տեղի ունեցած հասոյթի արդիւնաւորման համար ջանք չինալեցին :

Ինչպէս յայտնի է Զերդ Բարձր Սրբազնութեան Որբանոցի Պատ . ինամակալութիւնն ատարեշրջանէն առաջ հրաժարած է հակառակ այն դիւրութեանց որով Պատկ . Ժուղով ըստ առաջարկութեան Հոգաբարձութեանս բարեհամութիւնն ունեցաւ 600 վեց հարիւր Օսմ . ոսկոյ բացառիկ նպաստ մը չնորհել արհեստարանաց մղում տալու համար , սակայն սոյն գումարն բաւական չեղաւ արհեստարաններէ գոյացեալ պարտուց հաշուեյարդարման որով բաւական գումար մը կը լւեռնաւորուի Հաստատութեանս պարտուց գումարին վրայ և հաշուեյարդարման բաւական կնճուա գործ մը ժառանգ կը մնայ , զոր մենք եւս ստիպուած ենք նոյնութեամբ փոխանցել մեր յաջորդներուն : Այսու ամենայնիւ Պատ . ինամակալութեան անդամոց աշխատասիրութիւնն չնորհապարտ թողած են Հոգաբարձութիւնս :

Ծնորհակալութիւն առ Ազն . Տիկր Աղեքսանդր Մանթաշեանց որ իւր յանձնաւութեան համաձայն Հաստատութեանս տարեկան քարիւղն նուիրած է : Ծնորհակալութիւն առ Ազն . Յովհաննէս էֆ . Յակոբեան որ այս տարի եւս հանեցաւ նուիրել Որբոց ձմրան հագուստի կերպամն :

Ծնորհակալութիւն առ Ազն . Տօքիթ . Էսմէրեան և Տատուրեան էֆէնախս որք Տընօրէնութեան դիմումներուն վրայ աչքի , կոկորդի և ականջի հիւանդութեանց ենթակայ պատսպարեալներն անձնութիւնած են , նոյնպէս չնորհակալութիւնն առ տատանաբոյժ Վուանչապուհ էֆ . Թաշճէւան որ 15 օրն անդամ մը Հիւանդանոց այցելելով անձնութիւնաբար դարմանած է պատսպարելոց ակուաներն :

Ծնորհակալութիւն առ Ազն . Տօքիթ . Էսմէրեան և Տատուրեան էֆէնախս որք Հաստատութեանս պատսպարեալներուն վրայ աչքի , կոկորդի և ականջի հիւանդութեանց անթակայ պատսպարեալներն անձնութիւնած են , նոյնպէս չնորհակալութիւնն առ տատանաբոյժ Վուանչապուհ էֆ . Թաշճէւան որ 15 օրն անդամ մը Հիւանդանոց այցելելով ակուաներն :

Ծնորհակալութիւն ընդհանուր պաշտօնէութեան որ իր ստանձնած պարտականութիւնն իսղճի մաօք կատարելու ջանապետ կը գտնուի :

Վերջացնելէ առաջ Հոգաբարձութիւնս պարտ կը համարի իւր ութամեայ պաշտօնավարութեան միջոցին գտած արտաքոյ կարգի հասոյթի աղբիւներն ներկայացնել :

1. Նուազանականութիւն ալգրեատորութիւնն :

2. Հարաբեկաց ծաղիւիութիւն :

3. Բնդարձակ Օրացոյցի հրատակութիւնն :

4. Զրի ճամբաներու համար եղած հանգանակութիւն:
5. Կտակները:

Նոյնպէս կը ներկայացնէ իւր կտարած բարենորդու մները:

1. Որբանոցի արհեստանոց հաստատութիւնը:
2. Կանաց յիւրանոցի մէջ 18 ամկողինոց ննջաւանի շինութիւնն:
3. Լուսացարանի լոս կարելոյն բարութումը և շեռոցին հանգածութիւնի փոփոխութիւնը:
4. Հիւանդանոցի պարտէկին յարդարութիւնը:
5. Տնօրինութեան յարկին կանառութեամբ:
6. Տնօրինութեան սկզբանին ընդհանուր յարկաց մէջ «քէկֆօն»ի հաստատութիւնը:
7. Չրաբուժական սրահի հաստատութիւնը կանաց և արանց հիւանդարաններու մէջ:
8. Սննդոց բաշխման համար փուռ-սայշակներու հաստատութիւն:
9. Վիրաբուժական գործողութեան ենթարկելի հիւանդաց փոխարութեան համար մասնաւոր ապրակ:
10. «Թէրմօ-Սիֆօն»ի կարսայի մը հաստատութիւնը ընդհանուր յարկաց տաք ցրի բաշխման համար:
11. Արանց և կանանց հիւանդարանի մէջ սննդներն վարի յարկին վերի յարկը հանելու համար վերելակի (ascenseur) հաստատութիւնը:
12. Աշխատոյ յիւրաներու յատուկ 40 ամկողինոց ննջաւանեալի և յարակից մասերու շինութիւն:
13. Արանց հիւանդարանի եւ ծերանոցի ճեմիչներու եւրոպական դրութեան վերածմամբ գարշահութեան գերծուիլ:
14. Հիւանդանոցի սեպհականութիւնն եղած անուշ ցուրը 1300 մէր հեռաւորութեան երկար խողովակներով Հաստատութեան մէջ թերուիլ և ընդհանուր յարկերու բաշխութիւնը:
15. 20 մէր բարձրութեամբ ցամբաներու հաստատութիւնը:
16. Նեցելցոց փոխարութեան համար մեռելակառի հաստատութիւն:
17. Քիմիական և սարրադարական աշխատանոցի հաստատութիւն:
18. Նոյնպէս մանեկաբանական աշխատանոցի հաստատութիւն ուր կը գտնուին մանրացոյց (microscope) և նրբանա (microtome) գործիքներ նույրեալ զանազան բարեւելերէ:
19. Խոհանոցի բարեկարգութիւն և եւրոպական նոր վառարանի հաստատութիւն:
20. Հիւանդանոցի դեմի պարտէկի որմակալում և ցհորի բացում:
21. Ս. Եկեղեցւ և նոր յարկարաժիներու շինութիւն նույրատութեամբ Բարեւարաց:
22. Ս. Եկեղեցւ կանառում և զարդարում:
23. Յակորեան Յարկարաժնի կանառում Բարեւարին նույրատութեամբ:
24. Յակորեան Յարկարաժնի «Քաջորիֆէր»ի հաստատութիւն Բարեւարին նույրատութեամբ:
25. Դեղարանի նորոց շինութիւն Բարեւարին նույրատութեամբ:
26. Դեղարանի կանառում:
27. Հականեխական մէծ շեռոցի (Etuve) հաստատութիւն Բարեւարի նույրատութեամբ:

28. Ցիշեալ շեռոցի զետեղման համար մասնաւոր շենքի մը շինութիւն:
29. Տունարական բարեկարգութիւն և զանազան հաշուալքան նոր դրութեան վերածում:
30. Զանազան կտակներէ եւ աղբյուրներէ կաղուածոց և գոյից յաւելում 40,000 Օսմ. ուկրոյ:

31. Հիւանդանոցի մէջ եղած այլ և այլ շինութիւնն 17750 Օսմ. ուկրոյ:

Խնչպէս յայտարած ենք ներկայ չէնքերն ազգայնոց արդի թուոյն հետ բաղդատամբ կրնան առ այժմ գոհացում տալ ամէն պէտքերու եթէ մեր պատուարժան յարդք հաճին ի գլուխ հանել հետեւեալ կարդաղրութիւններն:

Ա. — Ներքին և արտաքին հիւանդութեանց սրանդները փոխադրել երեք նոր յարկարաժիններու մէջ ինչպէս կանաց մասն փոխադրուած է նոյնպէս արանց մասն ալ զետեղել նոր չէնքերու մէջ որ 110 անկողիններէ կը բաղկանայ և այս հիւանդարանն լիուլի գոհացում կրնայ տալ դիմող հիւանդաց և ո՛չ թէ պատսպարելոց, կին հիւանդապահունեաց յատկացնելով ամբողջ յարկարաժիններու սպասարկութիւնն բացի մէկ քանի այր հիւանդապահներէ որոց ներկայութիւնն հարկ անհրաժեշտ է:

Բ. — Հին հիւանդարանաց մէջ վերահաստատել թոքախտաւորաց յատկացեալ անկողիններն նաև ասրափոխիկ հիւանդութեանց և անբուժելիններու սրաներն:

Գ. — Որոշել և սահմանափակել պատսպարելոց թիւը և տեղ բացուելուն նորերը առնուլ:

Դ. — Որբանոցի անկրակ վիճակը բարւոքել իւր ամէն պէտքերովն երբ որբերն փոխադրուին նոր կառու ցանելի Որբանոցի մէջ:

Ե. — Նոր յարկարաժիններու մէջ պատսպարեալ հիւանդաց ամէն տեսակ խնամքներու ոյժ տալ որպէս զի հոն դիմողները չուտապ առողջանալով մեկնին և նոր եկողներու տեղ բացուի:

Զ. — Թեթեւ մնունդ տալ ծերերու և այլ այս կարգի պատսպարեալներու:

Է. — Աւելի իննամք տանիլ աշխատաւոր յիմարաց:

Ը. — Բնդհանուր բարւոքում պաշտօնէից և հիւանդապահունեաց:

Վերջացնելով սոյն տեղեկագիրն Հոգաբարձութիւնս կը խնդրէ Բարձր. Սրբադնութիւնէդ որ բարեհաճիք օրնել Հաստատութեանս բոլոր բարերարներն ու սատարողներն և եթէ յարմար դատէք արտօնուլ տեղեկագրիս առպարութիւնն:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյ Բարձր Սրբադնութեանդ.

1907 Մայիս 3

Մնամ ամենախնարն Ուղիբ
Անդամ Հոգաբարձութեան Հիւանդանոցի

ՊԱՏՐԻԿ ԿԻՒՊԵՆԿԵԼ (Բացակայ)



ԳՐԻԿՈՐ ԷՎՐԵՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՍԼԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՐԱՄԱՆԵԱՆ
ՊԵՏՐՈՍ ԽՈՐԱՆԵԱՆ
ՏԻԳՐԱՆ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՏՈՒԹ. Ա. ՆԱԶԱՐԵԱՆ
ՏՕՒԹ. Վ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

280000

ԿԱԼՈՒԱՆԱԾՈՅՑ ՀԱՍՈՅՑԹՔ		ՕՆԲ. ՆԱԿԻ 108 Դ.Ը.
Կալուածոց վարձերէն զուս հասոյք	53804.75	
Խովիլիալ Օթէկի վարձերէն մեր առածք	64800 —	
Կանկառանցին զուս հասոյքը	4176.75	122781.50
Ա.Պ.Հ.ՀՈՎԵԱԼ ԵԿԱՄՈՒՏ		
Նպաստ Կառավարութեան հաջ	162762.25	
» » միս	139612.50	302374.75
Մալիէէն յատկացեալ բռօակ		19908 —
Մխալսոփ Ռէժիին նպասր		4737 —
Արհեստ. Վ. ՌԵՐԵԲ. Խճամակալութենէն տարեկան		64800 — 391819.75
Զ.Ա.Ր.ԺՈՒՆ ԵԿԱՄՈՒՏ		
Զանազան կտակաբաժիններէ	4684 —	
Պարզ օրացոյց	55192 $\frac{1}{4}$ — 21826 = 33366 $\frac{1}{4}$	
Ընդարձակ օրացոյց	31479 $\frac{1}{2}$ — 20744 $\frac{1}{4}$ = 10735 $\frac{1}{4}$	44101.50
Սիկարի բռւղբի հասոյք		43755 —
Լուցկիի հասոյք		1200 —
Մոմատան զուս շահը		18365.75
Անցագրատան հասոյքը		6233 —
Նշանութի		8870 —
Վ. ազժի		8475.25
Արժեքրեց կտրոն եւ իրամի տոկու		10254 —
Տոկու		13546 — 159484.50
Ա.Ց.Լ ԵԽ Ա.Ց.Լ.Ք		
Անասնարանէն զոյացեալ շահ	11466.25	
Դրամական շահ	3544.50	15010.75
Զ.Ա.Ն.Ա.Զ.Ա.Ն ՀԱՍՈՅՑԹՔ		
Դրամական նուէրֆ	113620.75	
Նիւթալան »	76157.50	
Հանգանակութիւն	20423 —	
Բաժանորդագրութիւն	320 —	
Գանձանակաց հասոյք	18052.50	
Պնակաց »	24583.25	
Նուէրֆ փոխան այցելութեանց	11475 —	
» » ծաղկեպսակաց	59602.50	
» » ծաղկեփնչից	9830 —	
Նուգահանդէսի զուս հասոյքը	100610.50	434675 —
Ն.Ե.Ր.Ք.Ի.Ն ՀԱՍՈՅՑԹՔ		
Պէյքիւլմալի հասոյք	3840 —	
Բանկալի »	648.50	
Թաղման նուէրֆ	4020.50	
Նեշեցելոց աւանդներէ	8842 —	
Պատսպարելոց բռօակներէ	136671.50	
Միջ տուրֆ	17356 —	
Ցինան միջ տուրֆ	4248 —	
Զանազան հասոյք	6197 — 181823.50	
		1305595 —

1906 ՏԱՐԻՆՅ

Digitized by srujanika@gmail.com

		Օսմ. ոսկի 108 դշ.
Սպառած ուսես		487952 —
» հանդերձեղէնք		121829.50
» կարասիվ		11608.75
» Պառելանիւր , լուսաւորութիւն և մաերութիւն		86828.75
» դեղ եւ վիրաք. պիտոյք		35397 —
Որբանցի պատօնեից ամսականնեն	87220 —	
» դպրոցական պիտոյք	6976 —	94196 —
Պատօնեից ընդհանուր ամսականնեն		303419 —
Նորոգութիւն Հիւանդանոցի		27837 —
» Ա. Յակոբայ		6098.25
Զանազան ծախիվ		52495.50
Դիւնական ծախիվ		9350.25
Ապահովագրութիւնն Հիւանդանոցի և կարասեաց		5083.25
Յատկացեալ ամսականն		13817.50
Տոկոս		6105.75
Զեն եւ տան		3898.25
		1255912.75
Հասութիւն առաւելութիւն պանեսի փոխադրուած		39678.25

ՎԻՃԱԿ Ս. Փ. ԱԶԳ.

31 ԴԵԿԱՏՈՒՐԵ

፩፻፭፻

Գ.Ա.Լ.ՈՒ.Ա.Ծ ԵԽ Ա.Ր.Ժ.Ե.Թ.ՈՒ.Ղ.Թ.		Օսֆ. ուկի 108 դր.
Հնդիանուր կալուածոց արժեքը	1520920 —	
Խոհիվալ Օքէի արժեքը	2394852 —	
Արժեքուղերու »	282947.25	4198719.25
Պ.Ա.Տ.Ր.Ա.Ս Ա.Ի.Ա.Ն.Գ ԵԽ Ա.Յ.Լ.Ք		
Աւանդ ձգուած դրամներ	453880.75	
Դարակէօզեան Յանձնաժողովին ճով պատրաստ	177370.75	631251.50
Կարստաց արժեքը	485800 —	
Պ.Ա.Տ.Ր.Ա.Ս Պ.Ա.Ր.Է ԵԽ Ա.Յ.Լ.Ք		
Անասնոց եւ ուսեսից արժեքը	43245 —	
Պատրաստ պարէններու »	28879 —	
» հանդերձեղինաց արժեքը	239400 —	
» վառելանիւթից »	10095 —	
» դեղօրէից »	8387 —	
» դրամ	2873.75	331879.75
Պ.Ա.Տ.Ր.Ա.Ս Դ.Ր.Ա.Մ Ա.Գ Լ.ՈՒ Խ		
Մոմատան դրամազլուխը	52097 —	
Արհեստարաններէն պահանջ	15427.75	67524.75
Հ Ե Խ Ա.Ն.Գ Ա.Ն Ո Յ Ե Պ.Ա.Հ Ա.Ն Զ Բ Ե Բ Բ		
Մալիէն պահանջ	99318.75	
Խրամի պահօնատունէն պահանջ	10473 —	
Պատապարելոց բռակներէ	30771.25	
Հնդացիկ հաշիւներէ	167711.25	
Զանազաններէ պահանջնն	77954.75	
Պայմանաւոր պահանջներ	27653.75	413882.75
Հիմնադրանոցի բացը	348164.50	
	6477222.50	

Սոյն հաշտելցողի տունաց ըստ ամենայնի համաձայն լինելով կը հաստատեմ

2 3niγhu 1907

Ընդհ. Համարակալ
ՅՈՎԱԿԻՄ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Տեսուչ Գրասենեկի
Մ. Ա. ԽԵՒՏԱՎԵՐՏԵԱՆ

Սոյն հաշուեկշռոյն ճշդորիւնը կը հաստատեմ

Ե Գիմաց Հոգաբարձութեան

Գանձապէս

Վ. Ա. Ասենաղպր

Վ. Ասենապետի
ՏԻԳՐԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՑԻ

1906 ՏԱՐԻՈՅ

ՊԱՐՏՅ

Հ Ե Ւ Ա Ն Գ Ա Ն Ո Յ Ի Պ Ա Ր Տ Բ Շ Ա Բ		Օսմ. ունկի 108 լրշ.
Կարուած. srng վարչութեան պարտ	.	29550 —
Բնբացիկ հաշիմներու պարտ	.	138242 —
Զանազաններու պարտ	.	243439.50
Փոխառուներու	»	346856.75
		758088.25
 Ա. Ե Ս Ա Գ Ք Ք		
Պատսպարելոց աւանդ ձգած դրամները	.	31890 —
 Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ա Յ Յ Կ Տ Ա Կ Ն Ե Բ Ը		
Գարակէօվեան կտակին	.	2565972.75
Քէլէկեան	»	432000 —
Շիւմանեան	»	108000 —
Նազգաւեան	»	16200 —
Արզումանեան	»	10800 —
Կտակեալ դրամագլխի	.	60187.75
» կալուածոց	.	140075 —
Պահեստի զումար	.	3333235.50
		93678.25
		4216892 —
Ներկայ լինակիր.	.	2260330.50
		6477222.50

Ազգ. Վարչութեան Տեսեալիան Խորհուրդը՝ Կեդր. համարակալի տեղեկացրին վրայ կատարելով կանոնական բնուորիննը Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի 1906 տարոյ մասա- կարառութեան սոցի հաշոց (անփոխեալ 4—196 կցերուն վրայ տուարիս), կը հաստաք ա- նոնց ձշուորիննը :

Ի Գիմաց Տեսեական Խորհրդոյ

Վ. Ասենադպրի Ասենապես
ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԵԿԱՆ Մ. ՇԻՐԻՆԵԱՆ

ԱՐՏԱՍՈՎՈՐ ԳԱՆՉՄՈՒՆՔ

Մ Պ Խ Տ Ք

Օսմ. ոսկի 108 դր.

ՆՈՒԷՐԲ Վ.Ա.Ս Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԶԱՐԴԱՐԱՆԱՅ

Տ. Մեսրոպ Ս. Արենապ.ի նուիրած զգեստուց	54000
Եւ Եկեղ. զարդուց արժեքը	
Տիկին Գարամանեանի ձեռօֆ Ս. Եկեղեցոյ զարդեղեններու համար հանգանակեալ զումար	9268
Զանազաններէ նուիրեալ զարդեղենն	5422

68690

ՊԱՏԱՀԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Յակոբեան Յովհաննէս Էֆ.ի կողմէ նուիրեալ համանուն յարկի կարասեաց արժեքը	42700
Բարեսէր անձի մը կողմէ նուիրեալ կարասիք	5089

47789

ՑԿԵԱՆՍ ՄՏԻՅ ՏՈՒՐՔ

Պողոս Յակոբեանի պատսպարութեան փոխարէն առնուած կէս խանութի արժեքը	2500
--	------

183779

ԱՐՃԵՍՏ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Արհեստաբանաց դրամագլուխ բլլալու համար բացառաբար առնուած դրամ	64800
	<u>183779</u>

ԵՒ ՎՃԱՐՄՈՒՆՔ

Ե Լ Ռ

Օսմ. ոսկի 108 դր.

ԱՐՃԵՍՏԱՐԱՆԻ ՈՐԲԱՆՈՅԻ


Արհեստաբանաց դրամագլուխ բլլալու համար Արհեստ. Վարժարանի Խնամակալութենէն բացառաբար առնուած գումարը Որբանոցի Խնամակալութեան յանձնուած

64800

Վ Ի Ճ Ա Կ

Նուիրատուութիւնները գոյներ (կարասի Եւ կալուած) բլլալուն, վիճակին վրայ բարդուած

118979



ԸՆԴՀԱՆՈՒՐ
1906

ՄՈՒՏՔ

Բնդիանուր կալուածոց բանած վարձեր	5940 —	91025.50
Պարտէզի սրբարանին վարձեր	1700 —	
Վարձու տրուած արքեպոս վարձեր	500 —	
Պարտէզի միւլիի վարձեր	3600 —	
Տարանելի ձիբաստանին վարձեր	388 —	12128 —
Կէմէլիկի > >		
		103153.50

ԿԱԼՈՒԱԾՈՅ ԱՐԺԵՔԸ

Տարի	Արժեք
1899	1406496
1900	1422996
1901	1450646
1902	1482415
1903	1492815
1904	1531790
1905	1529900
1906	1520920

ԿԱԼՈՒԱԾՈՅ ՎԱՐՁՔ
ՏԱՐԵԿԱՅՑ

Տ. Ա. Խ. Ք.

Վնասեալ կտակաբաժինն	1650 —
Վահրամ Եպիփառոսի բաժինը իր կալուածի հասոյթէն	2592 —
Ամպէր Յովիաննեսեանի > > > >	1920 —
Գ. Լ. Ստեփանեանի > > > >	600 —
	5112 —
Նորոգութիւնն	6844.25
Թէնւիրիէ, բանգիմաք եւայլք	1960 —
Կալուածական տուր	15922.25
Ապահովագրութիւնն	2351.25
	27077.75
Փաստանին տարեկանը	3888 —
Հաւաքչին >	3600 —
Դատական ծախսեր	700 —
Զանազան >	1476.50
	9664.50
Անգանձելի վարձերէն ջնջուածներ	3684.50
Պարտէզի վարձակալին հին պարտէր ջնջուած	2160 —
	5844.50
	49348.75
Զուս հասոյթ	53804.75
	103153.50

ԵԻ ԵԿԱՄՈՒՏԸ

Զուս հասոյթ	0/0
42425.75	3
51618 --	3.70
18415.75	1.27
44971.25	3 —
41147.25	3 —
57175.75	3.73
43808.50	2.86
53804.75	3.53
	3.0/0 միջին սակ

ՀԱՍՈՅԹ

ԱՆԱՍ

		Օսմ. ոսկի 108 դր.
Կովերուն կարք 23117 ֆատ		34650.50
Վաճառեալ 1 կով 3 հորք	396.50	
» մորք (ձիու 1, ոչխարի 15, հորքի 6)	<u>227.50</u>	
Կտրուած ոչխար 13, հորք 3	1169.25	36443.75
1906 Դեկտ. 31 ին պատրաստ անասնոց արժեքը	32400 —	
» » » ուսեսներու »	10845 —	43245 —
		79688.75
ՀԻՆԳ ՏՄՐՈՒԱՆ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՀԱՇԻԽ ԱՐՏԱԴՐՈՒԱԾ ՈՒ ՍՊԱՌԱԾ ԿԱԹԵՐՈՒ		
1902 ին սպառած 25674 ֆատ կարին 18899 լ ներսէն խակ 4785 լ դրսէն զնուած է		
1903 » 28505 » » 23291 լ » » 5214 լ » » »		
1904 » 23711 » » 17539 լ » » 6172 լ » » »		
1905 » 27436 » » 26435 լ » » 1011 լ » » »		
1906 » 27608½ » » 23117 լ » » 4491½ լ » » »		

ՆԱՐԱՆ

ԾԱ. Խ. Ք

		Օսմ. ոսկի 108 դր.
1906 Ցնվր. 1 ին պատրաստ անասնոց արժեքը	35136 —	
» » » ուսեսից »	5430 —	30566 —
ՆՈՒԷՐ ԵՊԱԾ ԿԵՆԴԱՆԻՔ		
16 ոչխար	1560 —	
4 գառն եւ ուլ	155 —	1715 —
Ո Ւ Տ Ե Ս Ք		
415 քիլէ զարի	6254 —	
9386 ֆատ թեփ եւ 4134 ֆատ բասպալ	8296.75	
16929 » յարդ	3220.50	
36641 » խոս	13223.25	
16 քիլէ եռւլաֆ	192 —	31186.50
Ա Յ Լ Ե Ւ Ա Յ Լ Ք		
Զանազան ծախս	575 —	
Հովիւներու տարեկանը	2560 —	
Գնուած ձիու մը արժեքը	1620 —	4755 —
Յաւելեալ շահ	68222.50	
		11466.25
		79688.75

ՀԱՅՈՑԹԻՔ

**ՄՈՄԱ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ**

ՊԱՐԶ ՄՈՄԵՐՈՒ ՀԱՄՈՅԹԸ

Եկեղեցեաց բաւ 1271 — զին 20 դր.

Արմատին » 59 — » 12 »

բաւ 1330 —

Սոյն 1330 բաւ մոմին արժեքը զեղչելով 8 դր.

Զուտ հասոյթը

ԾԱՂԿԱԶԱՐԴ ՄՈՄԵՐՈՒ ՀԱՄՈՅԹԸ

Տրուած մոմեր բաւ 234 —

Գասր Գիւղի Եկեղեցիին 2 — 25 դր.

բաւ 236 —

Կերոնի նուերք

Ցես ձգուած 18 բաւ մոմերու արժեքը

Սոյն 236 բաւ մոմին արժեքը զեղչեալ 8 դր.

Զուտ հասոյթ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ.Ք

Նուեր առնուած բամպակ

Մեղրամոմի տան

ԳՈՐԾԱՐԱՆ

Բանուած ապրանքի վրայ գոյացեալ տան

Օսմ. ոսկի 108 դր.

25420 —

708 —

26128 —

10640 —

15488 —

5905 —

50 —

5955 —

4465 —

144 —

10564 —

1888 —

8676 —

540 —

86 —

626 —

692.75 —

25482 —

**ՏՈՒՆ
1906 ՏԱՐԻՈՅ**

ՀԱՅՈՑԹԻՔ

ՊԱՇՏՈՆԵՒՅԻՑ ԱՄՍԱԿԱՆՔ

Մոմագործ Ազարիկին 140 դր.

» Լեւոնին 150 »

» Օննիկին 60 » Մայիս 10 են

Զ.Ա.Ն Ա.Զ Ա.Ն Ք

Գրասենեկի վարձ

Փայտ եւ ածուխի փոխարեն

Զանազան ծախս

Գուրուչէսմէի Եկեղեցւոյ նին պարտեն ջնջուած մասը .

Գործարանին պակսած 66 3/4 բաւ խուրտային արժեքը .

Զուտ տան

Օսմ. ոսկի 108 դր.

1680 —

1800 —

460 — 3940 —

960 —

468 —

1018.50 2446.50

328.50

402 — 730.50

18365.75

25482 —

ՄՈՄԱ
ՎԻՃԱԿ 1906

፩፻፭፯

ԳՐԱՍԵՆԵԱԿԲ ՊԱՏՐԱՍՏ ԱՊՐԱՆՔ					Օսմ. ոսկի 108 դր.
Պարզ մոմեր . . . fաւ 326 —	զին	8 դրւ.		2608 —
Ծաղկազարդ մոմեր » 57.200	»	8 »		460 —
Մեղրամոմ » 14 —	»	18 »		252 —
Խուրսայ » 15 —	»	6 »		90 —
	fաւ	412.200			3410 —
ԳՈՐԾԱՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ ԱՊՐԱՆՔ					
Պարզ մոմեր . . . fաւ 562 —	զին	8 դրւ.		4496 —
Ծաղկազարդ մոմեր . » 503 —	»	8 »		4024 —
Խուրսայ » 3554 —	»	6 »		21324 —
Բամպակ » » 4 —	»	13 »		52 —
Խւլոս ֆիբիլ fաւ . . » 12 —	»	10 »		120 —
	fաւ	4635 —			30016 —
Կարասեաց արժեքը					2097.50
Ս. Եկեղեցիներէ պահանջ					17223 —
					19320.50
					52746.50

Տ Ս Ի Ն
ԴԵԿԱՏԵՐԻՑԵՐ 31 Ի

Q U E S T

**ԳԱՐԱԿԵՈԶԵԱՆ ԿՏԱԿԻ
ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Պ Ա Ր Ա Ք

	Օսմ. ոսկի
Գանձուած վարձեր	1861 —
Վաճառեալ արժեքութերէ գոյացեալ տան	20.94 $\frac{3}{4}$
Արժեքուց կտրոններէ	35.57
Դրամի տոկոս	22.86 —
	79.37.75
	1940.37.75

ՎԻՃԱԿ 1906**Պ Ա Ր Ա Ք**

	Օսմ. ոսկի
Խտկիալ Օթէլի արժեքը	20792.43.50
Թէրասի շինութեան ծախսուած	70 —
3 նոր շենքերու շինութեան ծախսուած	220 —
Թիւ 97 տան սանդուխին շինութեան ծախսուած . . .	160 —
2 խանութի եւ 2 տան շինութեան ծախսուած	874.25 —
Լսահան հֆենտիկ պահանջ	186.50 $\frac{1}{2}$
Սանասարեան Խնամակալութենէն պահանջ	1722.86 —
Վարձականներէ պահանջ	35.70 —
	1945.06.50
	24061.75 —

ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՉԱԺՈՂՈՎ
1906 ՏԱՐԻՈՅ

Պ Ա Ր Ա Ք

	Օսմ. ոսկի
Զանազան ծախս	79.63 $\frac{1}{4}$
Զուր	23 —
Զեն եւ տան	4.42 $\frac{1}{4}$
1321—2 տարիներու կալուածական տուրքը	302.74 $\frac{1}{4}$
Հիւանդանոցի Հոգաբարձութեան վիարեալ տարեկան . .	600 —
Դրամագլխոյն վրայ աւելցած	1009.79.75
	930.58 —
	1940.37.75

ԴԵԿՏԵՄԲԵՐ Յ Տ Ի Ւ**Պ Ա Ր Ա Ք**

	Օսմ. ոսկի
Դրամագլխոյն	20000 —
1905 ին յաւելեալ դրամագլուխ	2828.42 $\frac{3}{4}$
1906 » » »	930.58 —
Կալուածական տուրքէ պարտ մնացած	302.74.25
	24061.75 —

ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ԱՌԹԻՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

Վ. Ե Բ Ա Շ Ի Կ Ա Խ Ա Ն Ս Կ Ա Խ Կ		Օսֆ. ունի 108 դր.
Վերաշինութեան հաշուեն աւելցոծ դրամին մնացորդը		10836.75
Այս հաշույն բացը		243597.25
		254434 —

ԿՈՂՄԵ ԵՂԱԾ ԾԱԽՈՒՑ ՀԱՅԻՒԾ

Յ Ա Կ Ո Բ Ե Ա Ն Յ Ա Ր Կ Ա Բ Ա Ժ Ի Կ		Օսֆ. ունի 108 դր.
Քալօրիմերի զետեղման ծախմեր		11817 —
Թէրմոսիմօնի, թէլէմօնի եւ այլոց ծախմեր		15997 —
Այլ եւ այլ ծախմ.		14863 —
		42677 —
Կ Ի Խ Լ Պ է Խ Ա Ա Ն Յ Ա Ր Կ Ա Բ Ա Ժ Ի Կ		
Լոնտօնէն բերուած այլ եւ այլ կազմածներ		3753 —
Սալ ս' Օքէրասիօնի համար այլ եւ այլ կազմածներ		10335 —
		14088 —
Ո Խ Ն Ճ Ե Ա Ա Ն Յ Ա Ր Կ Ա Բ Ա Ժ Ի Կ		
Լոնտօնէն բերուած այլ եւ այլ կազմածներ		3575 —
Ա Փ Բ Կ Ի Զ Ե Կ Ե Վ Ե Ց Ա		
Բանկալի շինութեան եւ այլ ծախմեր		3950 —
Դ Ե Ղ Ա Ր Ա Ա		
Ապակիեղարամներու ծախուց մնացորդը		10260 —
Հ Ա Կ Ա Ա Ե Խ Ի Զ Մ Ե Ք Ե Ն Ա Ց		
Տեղույ շինութեան եւ զետեղման ծախմ		32884 —
Խ Ո Հ Ա Ա Ց		
Նոր կազմակերպութեան առիթ եղած ծախմեր		24246 —
Ա Յ Լ Ե Խ Ա Յ Լ Ք		
Հին Հիւանդարանի սանդուխին շինութիւն		17436 —
Հրապարակի յարդարում		9896 —
Մեծ դրնէն եկեղեցի տանող համբան եւ սանդուխ		12800 —
Եկեղեցիին հրապարակը բառօյն սալայատակելու		17015 —
Նոր էկնի քրօքուառին		9142 —
Նոր յարկեռու յարդարամաք հոգերը վերցնելու		12500 —
» » » շինուած պատեռու եւ այլն		11300 —
Ականներու շինութեան ծախմ		16465 —
		49407 —
		106554 —
Հ Ա Կ Ո Գ Ա Խ Թ Ի Խ Ա		
Հսկող նարտարապետին վճարեալ		16200 —
		254434 —

ԵՐԿԱՄԵԱՅԻ ԲԱՂԴԱՏԱԿԱՆԻՑԱԿ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Հ Ա Ս Ա Յ Թ Ք

Ծ Ա Խ Թ Ք

	1905	1906	ՊԱԿԱՍ	ԱՒԵԼ	1905	1906	ՊԱԿԱՍ	ԱՒԵԼ			
	Օ. Ա. 108 դր.		Օ. Ա. 108 դր.	Օ. Ա. 108 դր.	Օ. Ա. 108 դր.						
ԿԱԼՈՒԱՄԱԿԱՆ ՀԱՍՈՅԹՔ											
Կալուածոց վարձերէն զուս հասոյք	43808.50	53804.75	— —	9990	Սպառած ուժես	516793 —	487952 —	28841 — — —			
Խտիխալ Օքէն մեր առածք	86400 —	64800 —	21600 —	—	» հանդերձեղիմ	103310 —	121829.50	— — — 18519.50			
Կանկառանցին զուս հասոյք	— — —	4176.75	— —	4176	» Կարասիմ	23191.25	11608.75	11582.50			
Տարբերութիւն պակաս											
130208.50	122781.50	21600 —	14173		» վառելանիւր	85159 —	86828.75	— — — 1669.75			
— — —	7427 —	— —	7427		» գեղ եւ վիրաբուժական պիտոյ	37447.25	35397 —	2050.25			
130208.50	130208.50	21600 —	21600		Որբանցի ամսականի	80546 —	87220 —	— — — 6674			
ԱՊԱՀՈՎԵԱԼ ԵԿԱՄՈՒՏ											
Նպաս կառավարութեան նաց	159080 —	162762.25	— —	3682	» դպրոցական պիտոյ	5275.75	6976 —	— — — 1700.25			
» » միս	162281.25	139612.50	22668.75	—	Պատօնեկից բնիհանուր ամսականի	287597 —	303419 —	— — — 15822			
Մալիէն յանկացեալ բռւակ	19908 —	19908 —	— —		Նորոգութիւնի նիւանդանցի	30748.75	27837 —	2911.75			
Նիւանդի բէժին նայասր	4733.25	4737 —	— —		» Ա. Յակոբյա	1444 —	6098.25	— — — 4654.25			
Արևս. Վարժնի. խնամակալութենէ տարեկան	64800 —	64800 —	— —		Զանազան ծախ	59056 —	52495.50	6560.50			
Տարբերութիւն պակաս											
410802.50	391819.75	22668.75	3686		Դիւանական ծախ	13997.75	9350.25	4647.50			
— — —	18982.75	— —	18982		Ապահովագութիւնի	16980 —	13817.50	493 —			
410802.50	410802.50	22668.75	22668		Յանկացեալ ամսականի	2650.50	6105.75	— — — 3455.25			
ՇԱՐԺՈՒՆ ԵԿԱՄՈՒՏ											
Զանազան կտակարածիներէ	4684 —	4684 —	— —		» Զենքնական ծախ	21596 —	3898.25	17697.75			
Պարզ օրացոյցի հասոյք	31089 —	33366.25	— —		» Չափանուր պակաս	1291368.50	1265916.75	52495 —			
Ընդարձակ օրացոյցի հասոյք	13265.75	10735.25	2530.50	2277	» Բանշառանուր պակաս	— — —	25451.75	25451.75			
